ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.09.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-41/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-41/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Վ-Լյուքս» ՓԲԸ-ի կողմից 06.09.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-41/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. **<u>«Վ-Լյուքս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Վ-Լյուքս» ՓԲԸ-ն հայտնել է, որ 2013 թվականի հուլիսի 22-ին «Վ-Լյուքս» ՓԲԸ-ն և «Տելկոմ Գրուպ» կազմակերպությունը կոնսորցիումը հրավեր են ստացել N1 չափաբաժնի սարքավորման ձեռքբերման բանակցային ընթացակարգին մասնակցելու համար 2013թ. օգոստոսի 5-ից ոչ ուշ դիմումների ներկայացման ժամկետով և դիմումների ներկայացման վերջնաժամկետից նվազագույնը 5 օրացուցային օր շուտ հրավերի ներկայացման ժամկետով:

Այսպիսով, ըստ էության նյութերի ամբողջական նախապատվությանը հատկացվել էր 13 օրացուցային օր (որից 9 աշխատանքային), դիմումների նախապատրաստմանն ու ուղարկմանը՝ 8 օրացուցային օր (որից 6 աշխատանքային):

Հուլիսի 26-ի և 29-ի դիմումների պատասխանները ստացվել են համապատասխանաբար հուլիսի 29-ին և 30-ին բարձացված 13 հարցից (Հավելված N 5,6,7), որոնց մի մասին սպառիչ պատասխան չի տրվել (Հավելված N 3):

Օգոստոսի 12-ին կոնսորցիումին էլեկտրոնային նամակով հայտնել են, որ դիմումների գնահատման արդյունքների հրապարակման նիստը գնահատման հանձնաժողովի որոշմամբ տեղի կունենա 2013թ. օգոստոսի 19-ին՝ ժամը 12:00:

Օգոստոսի 19-ին կոնսորցիումի ներկայացուցիչները մասնակցել են գնահատման հանձնաժողովի նիստին, որը տեղի է ունեցել «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի վարչական շենքում՝ ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեում: Նախաորակավորման ընթացակարգն անցած ընթացակարգի տասնմեկ մասնակիցներից երեքն էին դիմում ներկայացրել և ըստ գնահատման հանձնաժողովի միայն Ericsson ընկերության առաջարկն էր ընթացակարգի պահանջներին համապատասխան ճանաչվել:

Օգոստոսի 20-ին կոնսորցիումը ծանուցում է ստացել (Հավելված N 8), որ կոնսորցիումի առաջարկը չի համապատասխանել ընթացակարգի պահանջներին:

Ընկերությունը հայտնել է, որ 22.09.2013թ. N 391-03/13B գրությամբ կոնսորցիումը «ՀՀՌՑ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով բանակցային ընթացակարգի սարքավորման գնման համակարգող պարոն Ս. Մ. Շահնազարյանին խնդրել է մանրամասնել, թե իրենց հայտի նկատմամբ ինչ հավակնություններ կան:

Օգոստոսի 24-ին գնահատող հանձնաժողովի նիստի 19.08.13թ. N5 արձանագրության համաձայն (Հավելված N 10)՝ «Վ-Լյուքս» ՓԲԸ-ն և «Տելկոմ Գրուպ» կազմակերպության կոնսորցիումի հայտը, հատկապես N 1-ին չափաբաժնի մասով, գնահատվել է անբավարար և ըստ ներքոնշյալ հանգամանքների մերժվել է:

Գնահատման հանձնաժողովի դիտողությունը՝

1. Տեխնիկական առաջարկը՝

1.1 Տեխնիկական առաջարկում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության վերգետնյա թվային հեռուստատեսային հեռարձակման ցանցի կառուցվածի ընդհանուր խնդիրներն ու մեկնաբանությունները, որոնք ընդհանուր առմամբ համապատասխանում են գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրի նկարագրական մասին, ներկայացվել են նաև ընդհանուր տեղեկություններ առաջարկվող սարքավորման մասին, սակայն հստակ նշված չեն եղել սարքավորման և նյութերի կապակցությունը, առանձնահատկությունները, կապի ալիքների որակական ցուցանիշների հաշվարկը, ծածկույթի քարտեզները և այլն:

1.1 կետի վերաբերյալ կոնսորցիումի առարկությունը՝

1.1.1 Չնայած ներկայացված անստույգ և ոչ ամբողջական նախնական նյութերին, տեխնիկական առաջադրանքի և ընթացակարգի պայմանների հակասություններին (Հավելված N 3,4) նշված աշխատանքները, ինչպիսիք են որոշակի կապակցությունը, սարքավորման և նյութերի առանձնահատկությունները, կապի ալիքների որակական ցուցանիշների հաշվարկը, ծածկույթի քարտեզները և այլք, իրականացվել են ներքին էսքիզային հաշվարկի տեսքով և կարող են ներկայացվել մրցույթային հանձնաժողովի կամ Գնումների բողոքարկման խորհրդի հարցմամբ:

Կոնսորցիումի ներկայացուցիչները կարծում են, որ առանձնահատուկ կարևորության խոշոր ազգային նախագծի համար պետք է ներկայացնել ամբողջական նախագիծ, փաստաթղթային ձևակերպում՝ հիմնված նախնական տվյալների և նկարագրի, ինչպես նաև որոշակի տեխնիկական առաջադրանքի վրա:

Հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են նախնական տվյալների անստույգությունը, չորոշակիացված տեխնիկական առաջադրանքը, ընթացակարգին հարցեր ուղղելու անհնարինության և պատասխանատվության ոլորտների ոչ հստակ սահմանազատումը կարելի է համարել, որ կոնսորցիումի առաջարկը լիովին համապատասխանել է տեխնիկական առաջադրանքին (Հավելված N 1), սակայն առկա պայմաններում շտկում անելու կարիք ունի:

1.1.2 Կոնսորցիումը ըստ ներկայացված նախնական տվյալների աշխատանքային նախագիծ չի ներկայացրել, քանի որ՝

ա) ընթացակարգի տեխնիկական առաջադրանքը պարունակում էր մեծաթիվ անհամապատասխանություններ, հակասություններ, թերի տեղեկատվություն, ինչպես նաև իրարամերժ պայմաններ (Հավելված N 4),

բ) ժամանակը չէր բավականացրել առաջարկությանը նախապատրաստվելու համար՝ ըստ էության ինը օր է հատկացվել: Օտարերկրյա փորձագետների կարծիքով նմանօրինակ լիակատար հաշվարկները գնահատվում են 0,5-1,5 մլն ԱՄՆ դոլար և լրիվ ծավալով իրականցվում են աշխատանքային նախագծման փուլում՝ ամբողջական նախագծային խմբերի կողմից մի քանի ամսվա ընթացքում,

գ) ըստ ընթացակարգի պայմանների հաշվարկ ներկայացնելը պարտադիր չէր, ինչի մասին հստակ նշված էր հրավերի ՄԱՍ 1-ի 4-րդ կետի 4.3 կետի դ) ենթակետում, որի համաձայն՝ դիմումում ներկայացվում են մասնակցի կողմից հաստատված տեխնիկական առաջարկը, որը պարունակում է առնվազն մանրամասն տեղեկատվություն մակնիշների,

...ողների, առաջարկվող սարքավորումն արտադրող երկրների, առաքման, ...ժի, սարքավորման կարգավորման, պատվիրատուի անձնակազմի ներառման և ...ուցման, ինչպես նաև սարքավորման կիրառության երաշխիքային ժամկետների մասին:

Գնահատող հանձնաժողովի դիտողությունը՝

1.2 «Չեն ուսումնասիրվել և չեն կիրառվել տեխնիկական բնութագրով և դրա հավելվածներով սահմանված գործող ցանցի կայանների վերաբերյալ նախնական տվյալները, մասնակիցներին վստահված աշխատանքային ժամերն ու հստակ պահանջները, ինչն արտահայտվել է աշխատանքի անհիմն գերագնահատված ծավալների և գնային առաջարկի մեջ»:

1.2 կետի վերաբերյալ կոնսորցիումի առարկությունը՝

1.2.1 Կոնսորցիումի գնային առաջարկում աշխատանքի հավելյալ ծավալը (տես հավելված 2) առաջարկվել է՝ ելնելով նման նախագծերի հետ աշխատելու փորձից, պարտադիր բնույթ ունի և տեխնիկական համապատասխանության վրա ոչ մի կերպ չի անդրադառնում: Դա նաև անմիջականորեն կապված է նախնական տվյալների բացակայության, տեխնիկական առաջադրանքի անստույգության և հակասությունների, ընթացակարգի փաստաթղթերում առկա անորոշության և ուղղակի հակասությունների հետ: Այդ հանգամանքներն արտահայտվել են տեխնիկական առաջադրանքում փորձագետների կողմից դիտարկված ռիսկերի մոդելում:

1.2.2 Քանի որ ըստ էության ընթացակարգի հայտարարման և ճշտումներ կատարելու ժամկետի սպառման մինչև 6 օր էր մնում, կոնսորցիումը նախագիծը գնահատել է վատթարագույն ռիսկի տեսանկյունից:

1.2.3 Կոնսորցիումը ենթադրել է, որ աշխատանքային նախագծի մշակման և դրա իրագործման նախապատրաստման փուլում, նշված ռիսկերը հիմնավոր կլինի առավել հստակ գնահատել և պակասացնել հավելյալ աշխատանքի ծավալը: Շեշտել է նաև, որ աշխատանքի հավելյալ ծավալը պարտադիր բնույթ չի կրում և կարող է ընթացակարգի սահմաններից դուրս մղվել:

1.2.4 Ցանկացած դեպքում ընթացակարգի պայմանների համաձայն առաջարկի գինը նվազում է մրցակցային աճուրդների ընթացքում և չի կարող տեխնիկական առաջարկի համար մերժման պատճառ հանդիսանալ:

Գնահատման հանձնաժողովի դիտողությունը՝

.3 «Բացակայում է կարևորագույն կառույցի՝ Երևանի հեռուստատեսային աշտարակի գտնվող 12x8 փոխանցող ալեհավաքի համակարգի վերաբերյալ տեխնիկական առաջարկը և տեխնիկական առաջադրանքի պայմանը (հավելված 7)»:

1.3 Կետի վերաբերյալ կոնսորցիումի առարկությունը՝

1.3.1 Արտադրողի մակնիշը, գինը և ալեհավաքի մասին ամփոփ տեղեկատվությունը նշված են կոնսորցիումի առաջարկության մեջ: 12x8 փոխանցող ալեհավաքի համակարգի բյուջեի գնահատականը տրված է էսքիսային հաշվարկի հիման վրա, որը կարող է ներկայացվել ընթացակարգի հանձնաժողովի կամ Գնումների բողոքարկման խորհրդի հարցմամբ: Նման աշխատանքը որպես կանոն իրականացվում է ամբողջական նախագծային խմբի կողմից և առանձին բյուջե է պահանջում:

1.3.2 Քանի որ նշված ալեհավաքը անհատական հաշվարկ է պահանջում:

1.3.3 Էսքիզային հաշվարկ չի ներկայացվել, քանի որ դրա ներկայացման համար պարտադիր պայման չի եղել, ինչի մասին հստակ նշված է հրավերում՝ ՄԱՍ 1-ին, կետ 4՝ դիմում ներկայացնելու կարգը, ենթակետ 4.3.դ. «4.3 Դիմումում ներկայացվում են մասնակցի կողմից հաստատված՝... դ) տեխնիկական առաջարկը, որը պարունակում է առնվազն մանրամասն տեղեկատվություն մակնիշների, արտադրողների, առաջարկվող սարքավորումը արտադրող երկրների, առաքման, մոնտաժի սարքավորման կարգավորման, Պատվիրատուի անձնակազմի ներառման և ուսուցման, ինչպես նաև սարքավորման կիրառության երաշխիքային ժամկետների մասին»:

Գնահատող հանձնաժողովի դիտողություն՝

2. «Դիմումի համաձայն ներկայացված փաստաթղթերի գնային առաջարկ պարունակող պահանջները չեն համապատասխանում հրավերի N 3 հավելվածով սահմանված պահանջներին, մասնավորապես գները ներկայացված են միայն թվերով»:

2-րդ կետի վերաբերյալ կոնսորցիումի առարկությունը՝

2.1 Առաջարկի ընդհանուր գումարը նշվել է տառերով, միայն միջանկյալ գումարներն են նշվել թվերով:

2.2 Աճուրդի առարկան ընդհանուր գումարն է հանդիսանում, այդ իսկ պատճառով նշված անհամապատասխանությունը չի կարող խիստ հակասել ընթացակարգի պայմաններին: Բողոք բերող անձը գտնում է, որ դա աննշան հանգամանք է և խնդրում է, որ իրենց առաջարկը պահանջներին անհամապատասխան չհամարվի:

Կոնսորցիումի ընդհանուր առաջարկությունները բոլոր կետերի վերաբերյալ՝

Հրավերի պայմանների՝ Մաս 1-ի 8-րդ կետի համաձայն՝ դիմումների գնահատման, ընտրություն և արդյունքների ընդհանրացում, ենթակետ 8.1՝ «Որակավորման դիմնավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում, հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն գրանցելու պարագայում գնումների համակարգողը 3 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղղում կատարել անհամապատասխանության հատվածում: Նախատեսված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու դեպքում մասնակցի դիմումը բավարար է գնահատվում»: Կոնսորցիումը հրավիրվել էր գնահատող հանձնաժողովի նիստին՝ առանց նախապես տեղեկացվելու անհամապատասխանությունների մասին, որտեղ էլ 8.1 կետի խախտմամբ վերջինիս դիմումն անբավարար է ճանաչվել: Կոնսորցիումին չի առաջարկվել ուղղում անել կամ անհրաժեշտ տեղեկատվությամբ համալրել առաջարկի այն կետերը, որոնք հարցեր են առաջացրել հանձնաժողովի մոտ, ինչը հակասում է հրավերի պայմաններին:

Ընթացակարգի հանձնաժողովի դիտողությունները՝

Արձանագրության մեջ նշված է նաև, որ նիստի ընթացքում հրավերին և տեխնիկական բնութագրին վերաբերող կոնսորցիումի մի շարք հարցերի շուրջ տրվել են պարզաբանումներ, որ հրավերի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցներն ըստ նշված կետով սահմանված կարգի կարող են դիմել գնահատող հանձնաժողովին նշված փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար:

Առարկություններ՝

Նշված աճուրդի նախապատրաստման և իրագործման ընթացքից դատելով՝ խոշոր օտարերկրյա մասնակիցներից գրեթե ոչ մեկը չի կարողացել ժամանակին կատարել մրցույթի անհրաժեշտ պայմանները: Տեխնիկական առաջադրանքի ընդլայնված մեկնաբանությունը, որտեղ ըստ ընթացակարգի հանձնաժողովի 9 աշխատանքային օրվա ընթացքում պահանջվում է ներկայացնել ազգային մասշտաբի ողջ համակարգի աշխատանքային նախագիծ՝ ուսումնասիրելով նախնական տվյալները, դրանք շտկելով, հաշվարկներ անելով, տեխնիկական առաջադրանքում փոփոխություններ անելով, անիրագործելի է: Նմանատիպ աշխատանքը առնվազն կես տարի ջանալի գործունեություն, դաշտային ուսումնասիրություններ, տեխնիկական առաջադրանքի շտկում, պատասխանատվության ոլորտների հստակեցում ու բաժանում և նախագծային փաստաթղթերի լիարժեք նախապատրաստում է պահանջում: Նման չափազանց սեղմ ժամկետների և ծայրահեղ անորոշության պայմաններում ընտրվել է առաջարկ

յացնելու միակ հնարավոր միջոցը, որը ներկայացնում է տեխնիկական լավագույն լուծումները ու գործունեության ժամանակը, էսքիզային նախագծային գործունեության ժամանակով, որը թույլ է տալիս հարյուր տոկոս երաշխավորել ընթացակարգի պահանջների բավարարումն ու լիակատար ազգային համակարգ ստեղծել:

Ռիսկերի և նախագծի ընթացակարգին վերաբերող հարցերը բազմաթիվ անգամ բարձրացվել են իրենց 02.08.2013թ. N 329-03/13B և 16.08.2013թ. N 368-03/13B նամակներում (Հավելված N6 և N 7), բայց դրանց պատասխաններ չեն տրվել:

Աշխարհում և ոչ մեկը չի կարող նման նախնական տվյալներով աշխատանքային նախագիծ կազմել: Նշված նախագիծն իրականացնելու գործընթացին մասնակցել են 20-ից ավելի ընկերություններ Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից, Լեհաստանից, Իտալիայից, Չինաստանից, Ճապոնիայից, Հոլանդիայից, Իսպանիայից, Ուկրաինայից, Լիտվայից և Լատվիայից: Նրանք բոլորն էլ համամիտ են, որ նշված նախագծի իրականացման մեթոդը շտկման անհրաժեշտություն ունի, տեխնիկական առաջադրանքն ու պատասխանատվության ոլորտների բաժանումը հստակեցման կարիք ունի. այնուամենայնիվ տվյալ պայմաններում Ընկերությունն արել է առավելագույնը:

Այսպիսով, Կոնսորցիումը նշել է նաև, որ՝

1. Կոնսորցիումի չորս հատվածից բաղկացած առաջարկը լիովին համապատասխանում է տեխնիկական առաջադրանքի պահանջներին, թե սարքավորումների և թե գործունեության տեսանկյունից (տես Հավելված N 1 և N 2): Տվյալ աղյուսակներից հետևում է, որ կոնսորցիումը ոչ միայն կատարել է տեխնիկական առաջադրանքի պահանջները, այլև գերազանցել է, դրանք կիրառելով համաշխարհային առաջնորդների վերջին նվաճումները, իսկ իրենց առաջարկի կազմում յուրաքանչյուր տիպի սարքավորման համար 2-3 այլընտրանք կա:

2. Կոնսորցիումի կարծիքով ինչնօրյա ժամկետում նմանատիպ գնման ընթացակարգեր կատարելն անհնար է, առավել ևս, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Բաց ընթացակարգի պարագայում դիմումներ ներկայացնելու սահմանված ժամկետը քառասուն օրացուցային օրից պակաս չպետք է կազմի, հաշվարկն սկսվում է գնումների մասին հայտարարության և գնումների հրավերի հրապարակման պահից»: Այնուամենայնիվ նրանք արել են անհնարինը և դրանով իսկ համաշխարհային ռեկորդ սահմանելով՝ լիովին նախապատրաստել մրցույթի փաստաթղթերը:

Մրցույթի տեխնիկական առաջադրանքը լի է անստույգություններով, կասություններով (տես Հավելված N 3 «Տեխնիկական խնդիրների ցանկ»):

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստին մասնակցում էին միայն հեռուստառադիոընկերության աշխատակիցները:

Ելնելով վերոգրյալից Ընկերությունների կոնսորցիումը խնդել է «Տեկոմ Գրուպ» կազմակերպության և «Վ-Լյուքս» ՓԲԸ-ի կոնսորցիումի առաջարկը ընթացակարգի պահանջներին տեխնիկապես համապատասխան ճանաչել և կոնսորցիումին թույլատրել գնային աճուրդին մասնակցել: Անհրաժեշտության դեպքում խնդրել են անկախ տեխնիկական փորձագետներ հրավիրել ընթացակարգի պայմաններին կոնսորցիումի դիմումի համապատասխանության գնահատման համար:

Չնայած վերոհիշյալ դժվարություններին և հակասություններին, Ընկերությունների կոնսորցիումը, որպես Եվրոպայում թվային հեռուստատեսության ամենախոշոր ինտեգրատորներ, համոզված է, որ «Վ-Լյուքս» ՓԲԸ-ի և «Տեկոմ Գրուպ» կազմակերպության կոնսորցիումը իրենց օտարերկրյա դաշնակիցների մասնակցությամբ համապատասխան ողղում անելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում թվային հեռուստատեսության ազգային նախագիծը կարող է հաջողությամբ իրականացվել:

2. <u>«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 10.09.2013թ. N 09/032-1263 գրությամբ դիմել է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 06.09.2013թ. «Վ-Լյուքս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն 23.09.2013թ. N 219 գրությամբ «Վ-Լյուքս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Կոնսորցիումի ներկայացրած առարկության 1.1 կետի վերաբերյալ.

Համաձայն «ՀՀՌՑ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով ընթացակարգի Հրավերի պահանջների, Մասնակիցը մինչև հայտերի բացման նիստը պարտավոր էր ներկայացնել սարքավորումների կապակցվածության, ռադիոռելսային գծերի (ՌՌԳ) կապուղիների

ական ցոցանիշների, հեռուստակայանների ընդգրկման գոտիների և այլնի վերաբերյալ նախագծային նյութերը կամ գոնե էսքիզային հաշվարկները:

Տեխնիկական բնութագրի 1,3,4,5,7,9,10 հավելվածներում բերված՝ թվային ռադիոռելային գծերի (ՌՌԳ) ցանցի, հեռուստատեսային հաղորդակների հզորությունների անտենաների տիպերի, տեղադրման նիշերի և ազիմուտների, արբանյակային հաղորդիչ կայանի ու ընդունիչ արբանյակային ցանցի կառուցման ելակետային տվյալները ՀՀՌՑ ՓԲԸ և իր գործընկերների կողմից իրականացված նախագծային լուծումների արդյունք են: Ինչպես նաև նշել է, որ կոնսորցիումի մասնակիցներից Tecom Group Inc. ընկերությունը մասնակցել է նախկին մրցույթի գործընթացին և առնվազն 1 տարի իր տրամադրության տակ ունի վերոհիշյալ ելակետային տվյալները:

Թվային ՌՌԳ կապուղիների որակական ցուցանիշների և կայանների հաստատուն ընդգրկման գոտիների հաշվարկի անհրաժեշտությունը պայմանավորված է կոնկրետ առաջարկվող սարքավորումների տեխնիկական պարամետրերով և վերջնական արդյունքի համար Մասնակցի պատասխանատվությամբ:

Ելակետային տվյալների անհամապատասխանության վերաբերյալ Մասնակցի հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը: ՌՌԳ կայանների աշխարհագրական կոորդինատները ՀՀՌՑ-ի մասնագետների կողմից ստուգվել են համապատասխան չափիչ սարքով (Garmin GPSmap 60CSx) և կասկած չեն հարուցում: Առանձին կայաններում կոորդինատների տարբերությունը պայմանավորված է 2-3 ուղղությունների անտենաների տարբեր հենարանների վրա տարածական բաշխմամբ և չի գերազանցում մեկ րոպեն: Այսպես օրինակ, Հավելված 10-ի 5-րդ կետում (Սարալանջ-Սպիտակ միջակայք) Սպիտակի կայանի կոորդինատները հետևյալն են. 40° 49' 53.7" N, 44° 15' 44.8" E, իսկ 6-րդ կետում (Սպիտակ-Վանաձոր միջակայք) նույն կայանի կոորդինատները չափվել են՝ 40° 49' 54.0" N, 44° 15' 45.1" E: Մրցույթի պայմաններով և ծրագրի բյուջեով նախագծային աշխատանքների համար լրացուցիչ 0.5-1.5մլն. ԱՄՆ դոլար միջոցներ նախատեսված չեն:

Գնման Հրավերը նախատեսում է միայն ՌՌԳ ցանցի աշխատանքային փաստաթղթերի մշակում: Թվային քարտեզների, համապատասխան ծրագրային ապահովման և տրամադրված մանրամասն ելակետային տվյալների (կոորդինատներ, ազիմուտներ, բարձրություններ) առկայության դեպքում աշխատանքները հնարավոր է իրականացնել 2-3 օրում:

Հրավերի 4-րդ կետում բերված Հայտ ներկայացնելու կարգի 4.3 ենթակետը, որը վերաբերում է գնման ընթացակարգին, լրացվում է Հավելված 1-ի տեխնիկական բնութագրով, որտեղ սարքավորումների մատակարարում, մոնտաժ և համալարում պայմանները կիրառվող ստանդարտների, սարքավորումների քանակի, տեխնիկական բնութագրերի և տեղանքին կապակցելու պայմանով լրացուցիչ բացված են կոնկրետ պահանջների տեսքով:

Կոնսորցիումի ներկայացրած առարկության 1.2 կետի վերաբերյալ.

Տեխնիկական բնութագրում և վերջինիս հավելվածներում շարադրված՝ տեխնիկական լուծումների, սարքավորումների մատակարարման կոնկրետ պայմանների և սեփական ուժերով իրականացվող աշխատանքների ծավալի մշակման մակարդակը բավարար է գնման համաչափելի արժեքի արժեքի ներկայացման համար, որը կապահովեր մասնակցի մրցունակությունը:

Մասնակցի գնային առաջարկում.

- ներառված են նաև 1.13-1.15, 1.37, 1.41, 1.43-1.49, 1.52 կետերի աշխատանքները (իրենց գնահատմամբ՝ 12.2 մլն. դոլար ծավալով), որոնք սեփական ուժերով պետք է իրականացնի ՀՀՌՑ-ն:
- արբանյակային հաղորդիչ կայանի համար, որտեղ տեխնիկական բնութագրով նախատեսված է գործող կայանի արդիականացում՝ էքսայտերի փոխարինմամբ, որի արժեքը շուկայում չի գերազանցում 20 հազար եվրոն, Մասնակցի կողմից առաջարկվել է 1.3 մլն. ԱՄՆ դոլար:

Այս ամենը վկայում է մասնակցի կողմից Հրավերի և վերջինիս հավելվածների ոչ բավարար ուսումնասիրման և խնդրին մակերեսային մոտեցման մասին:

Ըստ Պատվիրատուի զարմանք է հարուցում նաև նման, իրենց բնորոշմամբ հեղինակավոր, կազմակերպության և վերջինիս բազմաթիվ գործընկերների կողմից ներկայացված գնային առաջարկներում թվային 4 մուլտիպլեքսի ձևավորման Երևանի գլխամասային կայանի արժեքի գնահատումը՝ 1.67մլն. ԱՄՆ դոլար, որը մի քանի անգամ գերազանցում է 0.4-0.5մլն. ԱՄՆ դոլար կազմող իրական շուկայական արժեքը:

Չնայած մանրամասն ելակետային տվյալների և տեխնիկական պահանջների առկայությանը, Երևանի հեռուստակենտրոնի համար 12x8 տիպի հաղորդիչ անտենայի մատակարարմանը վերաբերող տեխնիկական բնութագրի Հավելված 7-ի պահանջները չեն կատարվել:

Համաձայն Հրավերի պահանջների, Մասնակիցը մինչև հայտերի բացման նիստը պարտավոր էր ներկայացնել էսքիզային հաշվարկները:

Մրցույթի պայմաններով և ծրագրի բյուջեով այս աշխատանքների համար լրացուցիչ բյուջե նախատեսված չէ:

Կոնսորցիումի ներկայացրած առարկության 1.2 կետի վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության հիման վրա Հրավերի 3-րդ հավելվածով սահմանվել է, որ մասնակիցը առաջարկված գինը ներկայացնում է տառերով և թվերով:

Կոնսորցիումը գնային առաջարկ ներկայացրել է NN 1-ին և 4-րդ չափաբաժինների համար և միայն երկու չափաբաժինների արժեքների հանրագումարն է ներկայացրել նաև տառերով, ըստ չափաբաժինների ներկայացված գումարները արտահայտելով միայն թվերով:

Տվյալ դեպքում պետք է նկատի ունենալ նաև, որ հայտերի գնահատումը ըստ հրավերի հանձնաժողովն իրականացրել է ըստ չափաբաժինների:

Ինչ վերաբերում է հայտի գնահատման ընթացքում արձանագրված անամապատասխանությունների շտկման վերաբերյալ մանակցին հնարավորություն ընձեռելու հանգամանքին, ապա ըստ գնումների մասին ՀՀ օրենսդրության և հրավերի, նման հնարավորություն գնահատող հանձնաժողովն իրավասու է տալ այն մասնակցին, որի որակավորման չափաբաժինների գնահտման արդյունքում արձանագրվել թերություններ: Տվյալ դեպքում արձանագրված անհամապատասխանությունները չեն վերաբերել որակավորման չափանիշներին, ինչով պայմանավորված կոնսորցիումին չի տրվել արձանագրված թերությունները շտկելու հնարավորություն:

<u>3. ԳԲԽ-41/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Վ-Լյուքս» ՓԲԸ-ի կողմից Կենտրոնին 06.09.2013թ. ներկայացված բողոքը մերժել:

<u>4. ԳԲԽ-41/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-41/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.</u>

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Վ-Լյուքս» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից 06.09.2013թ. ներկայացված բողոքը, «ՀՀՌՑ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «ՀՀՌՑ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով բանակցային ընթացակարգին մասնակցելու նպատակով «Վ-Լյուքս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը, «ՀՀՌՑ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 19.08.2013թ. կայացած նիստի N 5 արձանագրությունը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին հասցեագրված 23.09.2013թ. N 219 գրությունը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն վերգետնյա թվային հեռուստատեսային հեռարձակման համակարգի ներդրման համար անհրաժեշտ սարքավորման ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀՀՌՑ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ):

Հրավերի 1-ին մասի՝ գնման առարկայի բնութագիրը բաժնում սահմանված են թվով 4 չափաբաժիններ, որի NN 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով մասնակցելու նպատակով համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) հայտ են ներկայացրել «Վ-Լյուքս» ՍՊԸ-ն և «Տեկոմ Գրուպ» կազմակերպությունը:

«Վ-Լյուքս» ՓԲԸ-ն Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՀՀՌՑ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.08.2013թ. N 5 արձանագրությամբ որոշում է կայացրել N 1-ին չափաբաժնով «Վ-Լյուքս» ՓԲԸ-ի և «Տեկոմ Գրուպ» կազմակերպության կոնսորցիումի հայտը մերժել:

1. Բողոքաբեր ընկերությունը բողոքով ներկայացրել է վերջինիս հայտը մերժելու մասին Հանձնաժողովի 19.08.2013թ. N 5 արձանագրության 1-ին կետի վերաբերյալ Հանձնաժողովի դիտողությունները և դրանց վերաբերյալ բողոքաբեր ընկերության առարկությունները.

Հանձնաժողովի դիտողությունը՝

1. Տեխնիկական առաջարկը՝

1.1 Տեխնիկական առաջարկում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության Արգետնյա թվային հեռուստատեսային հեռարձակման ցանցի կառուցվածի ընդհանուր խնդիրներն ու մեկնաբանությունները, որոնք ընդհանուր առմամբ համապատասխանում են գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրի նկարագրական մասին, ներկայացվել են նաև ընդհանուր տեղեկություններ առաջարկվող սարքավորման մասին, սակայն հստակ նշված չեն եղել սարքավորման և նյութերի կապակցությունը, առանձնահատկությունները, կապի ալիքների որակական ցուցանիշների հաշվարկը, ծածկույթի քարտեզները և այլն:

1.1 կետի վերաբերյալ բողոքաբեր ընկերության առարկությունը՝

1.1.1 Չնայած ներկայացված անստույգ և ոչ ամբողջական նախնական նյութերին, տեխնիկական առաջադրանքի և ընթացակարգի պայմանների հակասություններին (Հավելված N 3,4) նշված աշխատանքները, ինչպիսիք են որոշակի կապակցությունը, սարքավորման և նյութերի առանձննահատկությունները, կապի ալիքների որակական ցուցանիշների հաշվարկը, ծածկույթի քարտեզները և այլք, իրականացվել են ներքին էքիզային հաշվարկի տեսքով և կարող են ներկայացվել մրցույթային հանձնաժողովի կամ Գնումների բողոքարկման խորհրդի հարցմամբ:

Կոնսորցիումի ներկայացուցիչները կարծում են, որ առանձնահատուկ կարևորության խոշոր ազգային նախագծի համար պետք է ներկայացնել ամբողջական նախագիծ, փաստաթղթային ձևակերպում՝ հիմնված նախնական տվյալների և նկարագրի, ինչպես նաև որոշակի տեխնիկական առաջադրանքի վրա:

Հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են նախնական տվյալների անստույգությունը, չորոշակիացված տեխնիկական առաջադրանքը, ընթացակարգին հարցեր ուղղելու անհնարինության և պատասխանատվության ոլորտների ոչ հստակ սահմանազատումը կարելի է համարել, որ կոնսորցիումի առաջարկը լիովին համապատասխանել է տեխնիկական առաջադրանքին (Հավելված N 1), սակայն առկա պայմաններում շտկում անելու կարիք ունի:

1.1.2 Կոնսորցիումը ըստ ներկայացված նախնական տվյալների աշխատանքային նախագիծ չի ներկայացրել, քանի որ՝

ա) ընթացակարգի տեխնիկական առաջադրանքը պարունակում էր մեծաթիվ անհամապատասխանություններ, հակասություններ, թերի տեղեկատվություն, ինչպես նաև իրարամերժ պայմաններ,

բ) ժամանակը չէր բավականացրել առաջարկությանը նախապատրաստվելու համար՝ ստ էության ինը օր է հատկացվել: Օտարերկրյա փորձագետների կարծիքով նմանօրինակ լիակատար հաշվարկները գնահատվում են 0,5-1,5 մլն ԱՄՆ դոլար և լրիվ ծավալով իրականացվում են աշխատանքային նախագծման փուլում՝ ամբողջական նախագծային խմբերի կողմից մի քանի ամսվա ընթացքում,

գ) ըստ ընթացակարգի պայմանների հաշվարկ ներկայացնելը պարտադիր չէր, ինչի մասին հստակ նշված էր հրավերի ՄԱՍ 1-ի 4-րդ կետի 4.3 կետի դ) ենթակետում, որի համաձայն՝ դիմումում ներկայացվում են մասնակցի կողմից հաստատված տեխնիկական առաջարկը, որը պարունակում է առնվազն մանրամասն տեղեկատվություն մակնիշների, արտադրողների, առաջարկվող սարքավորումն արտադրող երկրների, առաքման, մոնտաժի, սարքավորման կարգավորման, պատվիրատուի անձնակազմի ներառման և ուսուցման, ինչպես նաև սարքավորման կիրառության երաշխիքային ժամկետների մասին:

Հանձնաժողովի դիտողությունը՝

1.2 «Չեն ուսումնասիրվել և չեն կիրառվել տեխնիկական բնութագրով և դրա հավելվածներով սահմանված գործող ցանցի կայանների վերաբերյալ նախնական տվյալները, մասնակիցներին վստահված աշխատանքային ժամերն ու հստակ պահանջները, ինչն արտահայտվել է աշխատանքի անհիմն գերագնահատված ծավալների և գնային առաջարկի մեջ»:

1.2 բողոքաբեր ընկերության առարկությունը՝

1.2.1 Կոնսորցիումի գնային առաջարկում աշխատանքի հավելյալ ծավալը առաջարկվել է՝ ելնելով նման նախագծերի հետ աշխատելու փորձից, պարտադիր բնույթ ունի և տեխնիկական համապատասխանության վրա ոչ մի կերպ չի անդրադառնում: Դա նաև անմիջականորեն կապված է նախնական տվյալների բացակայության, տեխնիկական առաջադրանքի անստույգության և հակասությունների, ընթացակարգի փաստաթղթերում առկա անորոշության և ուղղակի հակասությունների հետ: Այդ հանգամանքներն արտահայտվել են տեխնիկական առաջադրանքում փորձագետների կողմից դիտարկված ռիսկերի մոդելում:

1.2.2 Քանի որ ըստ էության ընթացակարգի հայտարարման և ճշտումներ կատարելու ժամկետի սպառման միջև ընկած ժամանակահատվածը կազմել է 6 օր, կոնսորցիումը նախագիծը գնահատել է վատթարագույն ռիսկի տեսանկյունից:

1.2.3 Կոնսորցիումը ենթադրել է, որ աշխատանքային նախագծի մշակման և դրա յագործման նախապատրաստման փուլում, նշված ռիսկերը հիմնավոր կլինի առավել հստակ գնահատել և պակասացնել հավելյալ աշխատանքի ծավալը: Շեշտել է նաև, որ աշխատանքի հավելյալ ծավալը պարտադիր բնույթ չի կրում և կարող է ընթացակարգի սահմաններից դուրս մղվել:

1.2.4 Ցանկացած դեպքում ընթացակարգի պայմանների համաձայն առաջարկի գինը նվազում է մրցակցային աճուրդների ընթացքում և չի կարող տեխնիկական առաջարկի համար մերժման պատճառ հանդիսանալ:

Հանձնաժողովի դիտողությունը՝

1.3 «Բացակայում է կարևորագույն կառույցի՝ Երևանի հեռուստատեսային աշտարակի վրա գտնվող 12x8 փոխանցող ալեհավաքի համակարգի վերաբերյալ տեխնիկական առաջարկը և տեխնիկական առաջադրանքի պայմանը»:

1.3 կետի վերաբերյալ բողոքաբեր ընկերության առարկությունը՝

1.3.1 Արտադրողի մակնիշը, գինը և ալեհավաքի մասին ամփոփ տեղեկատվությունը նշված են կոնսորցիումի առաջարկության մեջ: 12x8 փոխանցող ալեհավաքի համակարգի բյուջեի գնահատականը տրված է էսքիսային հաշվարկի հիման վրա, որը կարող է ներկայացվել ընթացակարգի հանձնաժողովի կամ Գնումների բողոքարկման խորհրդի հարցմամբ: Նման աշխատանքը որպես կանոն իրականացվում է ամբողջական նախագծային խմբի կողմից և առանձին բյուջե է պահանջում:

1.3.2 Քանի որ նշված ալեհավաքը անհատական հաշվարկ է պահանջում:

1.3.3 Էսքիզային հաշվարկ չի ներկայացվել, քանի որ դրա ներկայացման համար պարտադիր պայման չի եղել, ինչի մասին հստակ նշված է հրավերում՝ ՄԱՍ 1-ին, կետ 4՝ դիմում ներկայացնելու կարգը, ենթակետ 4.3.դ. «4.3 Դիմումում ներկայացվում են մասնակցի կողմից հաստատված՝... դ) տեխնիկական առաջարկը, որը պարունակում է առնվազն մանրամասն տեղեկատվություն մակնիշների, արտադրողների, առաջարկվող սարքավորումը արտադրող երկրների, առաքման, մոնտաժի սարքավորման կարգավորման, Պատվիրատուի անձնակազմի ներառման և ուսուցման, ինչպես նաև սարքավորման կիրառության երաշխիքային ժամկետների մասին»:

Պատվիրատուն վերոգրյալի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Բողոքաբեր ընկերության ներկայացրած առարկության 1.1 կետի վերաբերյալ.

Համաձայն «ՀՀՌՑ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով ընթացակարգի Հրավերի պահանջների, Մասնակիցը մինչև հայտերի բացման նիստը պարտավոր էր ներկայացնել սարքավորումների կապակցվածության, ռադիոռելային գծերի (ՌՌԳ) կապուղիների որակական ցոցանիշների, հեռուստակայանների ընդգրկման գոտիների և այլնի վերաբերյալ նախագծային նյութերը կամ գոնե էսքիզային հաշվարկները:

Տեխնիկական բնութագրի 1,3,4,5,7,9,10 հավելվածներում բերված՝ թվային ռադիոռելային գծերի (ՌՌԳ) ցանցի, հեռուստատեսային հաղորդակների հզորությունների անտենաների տիպերի, տեղադրման նիշերի և ազիմուտների, արբանյակային հաղորդիչ կայանի ու ընդունիչ արբանյակային ցանցի կառուցման ելակետային տվյալները ՀՀՌՑ ՓԲԸ և իր գործընկերների կողմից իրականացված նախագծային լուծումների արդյունք են: Ինչպես նաև նշել է, որ կոնսորցիումի մասնակիցներից Tecom Group Inc. ընկերությունը մասնակցել է նախկին մրցույթի գործընթացին և առնվազն 1 տարի իր տրամադրության տակ ունի վերոհիշյալ ելակետային տվյալները:

Թվային ՌՌԳ կապուղիների որակական ցուցանիշների և կայանների հաստատուն ընդգրկման գոտիների հաշվարկի անհրաժեշտությունը պայմանավորված է կոնկրետ առաջարկվող սարքավորումների տեխնիկական պարամետրերով և վերջնական արդյունքի համար Մասնակցի պատասխանատվությամբ:

Ելակետային տվյալների անհամապատասխանության վերաբերյալ Մասնակցի հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը: ՌՌԳ կայանների աշխարհագրական կոորդինատները ՀՀՌՑ-ի մասնագետների կողմից ստուգվել են համապատասխան չափիչ սարքով (Garmin GPSmap 60CSx) և կասկած չեն հարուցում: Առանձին կայաններում կոորդինատների տարբերությունը պայմանավորված է 2-3 ուղղությունների անտենաների տարբեր հենարանների վրա տարածական բաշխմամբ և չի գերազանցում մեկ րոպեն: Այսպես օրինակ, Հավելված 10-ի 5-րդ կետում (Սարալանջ-Սպիտակ միջակայք) Սպիտակի կայանի կոորդինատները հետևյալն են. 40° 49' 53.7" N, 44° 15' 44.8" E, իսկ 6-րդ կետում (Սպիտակ-Վանաձոր միջակայք) նույն կայանի կոորդինատները չափվել են՝ 40° 49' 54.0" N, 44° 15' 45.1" E: Մրցույթի պայմաններով և ծրագրի բյուջեով նախագծային աշխատանքների համար լրացուցիչ 0.5-1.5մլն. ԱՄՆ դոլար միջոցներ նախատեսված չեն:

Գնման Հրավերը նախատեսում է միայն ՌՌԳ ցանցի աշխատանքային փաստաթղթերի մշակում: Թվային քարտեզների, համապատասխան ծրագրային ապահովման և տրամադրված մանրամասն ելակետային տվյալների (կոորդինատներ, ազիմուտներ, բարձրություններ) առկայության դեպքում աշխատանքները հնարավոր է իրականացնել 2-3 օրում:

Հրավերի 4-րդ կետում բերված Հայտ ներկայացնելու կարգի 4.3 ենթակետը, որը վերաբերում է գնման ընթացակարգին, լրացվում է Հավելված 1-ի տեխնիկական բնութագրով, որտեղ սարքավորումների մատակարարում, մոնտաժ և համալարում պայմանները կիրառվող ստանդարտների, սարքավորումների քանակի, տեխնիկական բնութագրերի և տեղանքին կապակցելու պայմանով լրացուցիչ բացված են կոնկրետ պահանջների տեսքով:

Բողոքաբեր ընկերության ներկայացրած առարկության 1.2 և 1.3 կետերի վերաբերյալ.

Տեխնիկական բնութագրում և վերջինիս հավելվածներում շարադրված՝ տեխնիկական լուծումների, սարքավորումների մատակարարման կոնկրետ պայմանների և սեփական ուժերով իրականացվող աշխատանքների ծավալի մշակման մակարդակը բավարար է գնման համաչափելի արժեքի արժեքի ներկայացման համար, որը կապահովեր մասնակցի մրցունակությունը:

Մասնակցի գնային առաջարկում.

- ներառված են նաև 1.13-1.15, 1.37, 1.41, 1.43-1.49, 1.52 կետերի աշխատանքները (իրենց գնահատմամբ՝ 12.2 մլն. դոլար ծավալով), որոնք սեփական ուժերով պետք է իրականացնի ՀՀՌՑ-ն:
- արբանյակային հաղորդիչ կայանի համար, որտեղ տեխնիկական բնութագրով նախատեսված է գործող կայանի արդիականացում՝ էքսայտերի փոխարինմամբ, որի արժեքը շուկայում չի գերազանցում 20 հազար եվրոն, Մասնակցի կողմից առաջարկվել է 1.3 մլն. ԱՄՆ դոլար:

Այս ամենը վկայում է մասնակցի կողմից Հրավերի և վերջինիս հավելվածների ոչ բավարար ուսումնասիրման և խնդրին մակերեսային մոտեցման մասին:

Ըստ Պատվիրատուի՝ զարմանք է հարուցում նաև նման, իրենց բնորոշմամբ հեղինակավոր, կազմակերպության և վերջինիս բազմաթիվ գործընկերների կողմից ներկայացված գնային առաջարկներում թվային 4 մուլտիպլեքսի ձևավորման Երևանի

գլխամասային կայանի արժեքի գնահատումը՝ 1.67մլն. ԱՄՆ դոլար, որը մի քանի անգամ գերազանցում է 0.4-0.5մլն. ԱՄՆ դոլար կազմող իրական շուկայական արժեքը:

Չնայած մանրամասն ելակետային տվյալների և տեխնիկական պահանջների առկայությանը, Երևանի հեռուստակենտրոնի համար 12x8 տիպի հաղորդիչ անտենայի մատակարարմանը վերաբերող տեխնիկական բնութագրի Հավելված 7-ի պահանջները չեն կատարվել:

Համաձայն Հրավերի պահանջների, Մասնակիցը մինչև հայտերի բացման նիստը պարտավոր էր ներկայացնել էսքիզային հաշվարկները:

Ընթացակարգի պայմաններով և ծրագրի բյուջեով այս աշխատանքների համար լրացուցիչ բյուջե նախատեսված չէ:

1-ին կետի վերաբերյալ.

Հանձնաժողովը 19.08.2013թ. N 5 արձանագրությամբ որոշում է կայացրել «Վ-Լյուքս» ՓԲԸ-ի և «Տեկոմ Գրուպ» կորպորացիայի կոնսորցիումի հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել՝ ներքոհիշյալ հանգամանքներով պայմանավորված՝

1. Տեխնիկական առաջարկ.

- տեխնիկական առաջարկում ներկայացված են ընդհանուր խնդիրները և պարզաբանումներ Հայաստանում ԹՎՀՀ ցանցի կառուցվածքի վերաբերյալ, որոնք ընդհանուր առմամբ համապատասխանում են գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրի նկարագրական մասին, և առաջարկվող սարքավորումների վերաբերյալ ընդհանուր տվյալներ՝ առանց կոնկրետ տեղակապումների, նյութերի և սարքավորումների մասնագրի, կապուղիների որակական ցուցանիշների հաշվարկի, ծածկույթի քարտեզների և այլն,
- չեն ուսումնասիրվել և չեն օգտագործվել տեխնիկական բնութագրով և դրա հավելվածներով նախատեսված՝ գործարկվող ցանցի կայանների վերաբերյալ ելակետային տվյալները, մասնակցին վերապահվող կոնկրետ պահանջները, ինչը բերված աշխատանաքների ծավալի և գնային առաջարկի չհիմնավարված բարձրացմանը,
- բացակայում է կարևորագույն կառույցի՝ Երևանի հեռուստաաշտարակի 12x8 հաղորդիչ անտենային համակարգի վերաբերյալ տեխնիկական առաջարկը, տեխնիկական առաջադրանքի պայմանը:

Հրավերի 1-ին մասի 4.3 կետի համաձայն՝ մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա) որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը.

բ) գնային առաջարկ.

գ) տեխնիկական առաջարկ, որը պետք է պարունակի առնվազն մանրամասն տեղեկատվություն առաջարկվող սարքավորումների մակնիշների, արտադրող կազմակերպությունների, արտադրման երկրների, սարքավորումների մատակարարման, մոնտաժման, կարգաբերման, գործարկման և Պատվիրատուի անձնակազմի ուսուցման, ինչպես նաև սարքավորումների օգտագործման երաշխիքային ժամկետների մասին: Ընդ որում սարքավորումների մատակարարման, մոնտաժման, կարգաբերման, գործարկման և Պատվիրատուի աշխատակազմի ուսուցման ժամկետի ավարտը չի կարող ավել լինել, քան սահմանված է նույն հրավերի N 6 հավելվածով:

դ) հայտի ապահովում.

ե) էլեկտրոնային փոստի հասցեն:

Հրավերի 2-րդ մասի «Արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հայտը պատրաստելու» Հրահանգի (այսուհետև՝ նաև Հրահանգ) 2.2 կետի 2.2.6 ենթակետի համաձայն՝ մասնակիցները հայտով ներկայացնում են տեխնիկական առաջարկ, որը պետք է պարունակի առնվազն մանրամասն տեղեկատվություն առաջարկվող սարքավորումների մակնիշների, արտադրող կազմակերպությունների, արտադրման երկրների, սարքավորումների մատակարարման, մոնտաժման, կարգաբերման, գործարկման և Պատվիրատուի անձնակազմի ուսուցման, ինչպես նաև սարքավորումների օգտագործման երաշխիքային ժամկետների մասին: Ընդ որում սարքավորումների մատակարարման, մոնտաժման, կարգաբերման, գործարկման և Պատվիրատուի աշխատակազմի ուսուցման ժամկետի ավարտը չի կարող ավել լինել, քան սահմանված է նույն հրավերի N 6 հավելվածով:

Գտնում ենք, որ Հանձնաժողովի կողմից բողոքաբեր ընկերության հայտը արձանագրության 1-ին կետում նշված հիմքերով մերժելն անհիմն է, հետևյալ պատճառաբանությամբ.

1. արձանագրության 1-ին կետի 1-ին պարբերությունում բողոքաբեր ընկերության հայտը մերժելու հիմքում նշված է, որ տեխնիկական առաջարկում ներկայացված են

ընդհանուր խնդիրները և պարզաբանումներ Հայաստանում ԹՎՀՀ ցանցի կառուցվածքի վերաբերյալ, որոնք ընդհանուր առմամբ համապատասխանում են գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրի նկարագրական մասին, և առաջարկվող սարքավորումների վերաբերյալ ընդհանուր տվյալներ՝ առանց կոնկրետ տեղակապումների, նյութերի և սարքավորումների մասնագրերի, կապուղիների որակական ցուցանիշների հաշվարկի, ծածկույթի քարտեզների և այլն, մինչդեռ Հրավերի 4-րդ՝ Հայտը ներկայացնելու կարգը բաժնի 4.3 կետով հստակ սահմանված է մասնակցի կողմից տեխնիկական առաջարկով ներկայացվող պահանջները, որտեղ առաջարկվող սարքավորումների վերաբերյալ կոնկրետ տեղակապումների, նյութերի և սարքավորումների մասնագրերի, կապուղիների որակական ցուցանիշների հաշվարկի և ծածկույթի քարտեզների ներկայացման վերաբերյալ որևէ պահանջ սահմանված չէ,

2. արձանագրության 1-ին կետի 2-րդ պարբերությունում բողոքաբեր ընկերության հայտը մերժելու հիմքում նշված է, որ չեն ուսումնասիրվել և չեն օգտագործվել տեխնիկական բնութագրով և դրա հավելվածներով նախատեսված՝ գործարկվող ցանցի կայանների վերաբերյալ ելակետային տվյալները, մասնակցին վերապահվող կոնկրետ պահանջները, ինչը բերել է աշխատանաքների ծավալի և գնային առաջարկի չհիմնավորված բարձրացմանը, մինչդեռ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև Հրավերով նախատեսված չէ այնպիսի դրույթ, որ ընթացակարգի մասնակցի հայտը ենթակա է մերժման այն դեպքում, երբ վերջինիս կողմից տեխնիկական բնութագիրը թերի ուսումնասիրելու արդյունքում տեղի է ունեցել գնման ենթակա աշխատանաքների, ծառայությունների և ապրանքների ծավալների և գնային առաջարկների չհիմնավորված բարձրացում,

3. արձանագրության 1-ին կետի 3-րդ պարբերությունում բողոքաբեր ընկերության հայտը մերժելու հիմքում նշված է, որ բացակայում է կարևորագույն կառույցի՝ Երևանի հեռուստաաշտարակի 12x8 հաղորդիչ անտենային համակարգի վերաբերյալ տեխնիկական առաջարկը, տեխնիկական առաջադրանքի պայմանը:

Բողոքաբեր ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ արտադրողի մակնիշը, գինը և ալեհավաքի մասին ամփոփ տեղեկատվությունը նշված են կոնսորցիումի առաջարկության մեջ: 12x8 փոխանցող ալեհավաքի համակարգի բյուջեի գնահատականը տրված է էսքիզային հաշվարկի հիման վրա, արտադրողի մակնիշը, գինը և ալեհավաքի մասին ամփոփ տեղեկատվությունը նշված են կոնսորցիումի առաջարկության մեջ: 12x8 փոխանցող ալեհավաքի համակարգի բյուջեի գնահատականը տրված է էսքիզային

հաշվարկի հիման վրա, որը կարող է ներկայացվել ընթացակարգի հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի հարցմամբ: Նման աշխատանքը որպես կանոն իրականացվում է ամբողջական նախագծային խմբի կողմից և առանձին բյուջե է պահանջում, քանի որ նշված ալեհավաքը անհատական հաշվարկ է պահանջում, իսկ Էսքիզային հաշվարկ չի ներկայացվել, քանի որ դրա ներկայացման համար պարտադիր պայման չի եղել, ինչի մասին հստակ նշված է Հրավերի 4.3 կետի գ) ենթակենում:

Պատվիրատուն ներկայացված առարկություններում նշել է, որ չնայած մանրամասն ելակետային տվյալների և տեխնիկական պահանջների առկայությանը, Երևանի հեռուստակենտրոնի համար 12x8 տիպի հաղորդիչ անտենայի մատակարարմանը վերաբերող տեխնիկական բնութագրի Հավելված 7-ի պահանջները չեն կատարվել, ինչպես նաև համաձայն Հրավերի պահանջների, մասնակիցը մինչև հայտերի բացման նիստը պարտավոր էր ներկայացնել էսքիզային հաշվարկները, մինչդեռ Հրավերով, ինչպես նաև Հրահանգով նման պահանջ սահմանված չէ:

2. Բողոքաբեր ընկերությունը բողոքով ներկայացրել է վերջինիս հայտը մերժելու մասին Հանձնաժողովի 19.08.2013թ. N 5 արձանագրության 2-րդ կետի վերաբերյալ Հանձնաժողովի դիտողությունները և դրանց վերաբերյալ բողոքաբեր ընկերության առարկությունները.

Հանձնաժողովի դիտողությունը՝

«Դիմումի համաձայն ներկայացված փաստաթղթերի գնային առաջարկ պարունակող պահանջները չեն համապատասխանում հրավերի N 3 հավելվածով սահմանված պահանջներին, մասնավորապես գները ներկայացված են միայն թվերով»:

Նշված կետի վերաբերյալ կոնսորցիումի առարկությունը՝

Առաջարկի ընդհանուր գումարը նշվել է տառերով, միայն միջանկյալ գումարներն են նշվել թվերով: Աճուրդի առարկան ընդհանուր գումարն է հանդիսանում, այդ իսկ պատճառով նշված անհամապատասխանությունը չի կարող խիստ հակասել ընթացակարգի պայմաններին: Բողոք բերող անձը հայտնել է, որ դա աննշան հանգամանք է և խնդրել է, որ իրենց առաջարկը պահանջներին անհամապատասխան չհամարվի:

Պատվիրատուն վերոգրյալի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության հիման վրա Հրավերի 3-րդ հավելվածով սահմանվել է, որ մասնակիցն առաջարկված գինը ներկայացնում է տառերով և թվերով:

Բողոքաբեր ընկերությունը գնային առաջարկ ներկայացրել է NN 1-ին և 4-րդ չափաբաժինների համար և միայն երկու չափաբաժինների արժեքների հանրագումարն է ներկայացրել նաև տառերով, ըստ չափաբաժինների ներկայացված գումարները արտահայտելով միայն թվերով:

Տվյալ դեպքում պետք է նկատի ունենալ նաև, որ հայտերի գնահատումը ըստ Հրավերի՝ Հանձնաժողովն իրականացրել է ըստ չափաբաժինների:

2-րդ կետի վերաբերյալ.

Հանձնաժողովը 19.08.2013թ. N 5 արձանագրությամբ որոշում է կայացրել «Վ-Լյուքս» ՓԲԸ-ի և «Տեկոմ Գրուպ» կորպորացիայի կոնսորցիումի հայտը մերժել է կոնսորցիումի հայտով ներկայացված գնային առաջարկ պարունակող փաստաթղթի վավերապայմանները Հրավերի N 3 հավելվածով սահմանված վավերապայմաններին չհամապատասխանելու հիմքով՝ մասնավորապես գները ներկայացված են եղել միայն թվերով:

Բողոքաբեր ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված Հրավերի N 3 հավելված հանդիսացող գնային առաջարկում Ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժինների գները ներկայացրել է մեկ ընդհանուր գումարով, որն արտահայտված է թվերով և տառերով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնումները որպես մեկ չափաբաժին, եթե դրանք կարող են ներկայացվել գնման նույն ընթացակարգի առանձին չափաբաժիններով:

Հրավերի 1-ին կետում՝ գնման առարկայի բնութագիրը բաժնում, սահմանված է, որ գնման առարկան բաղկացած է թվով 4 չափաբաժիններից:

Հրավերի 8.1 կետի համաձայն՝ հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները

ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով:

Հրավերի 8.2.4 կետի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ տվյալ օրվա Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հրավերի 8.2.2 ենթակետով սահմանված է, որ հայտերի գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովի կողմից որոշվում են բավարար գնահատված մասնակիցները: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գտնում ենք, որ այս հիմքով Հանձնաժողովը՝ մերժելով բողոքաբեր ընկերության հայտը, գործել է իրավաչափ:

Ինչ վերաբերում է Հանձնաժողովի կողմից բողոքաբեր ընկերության հայտը մերժելու վերաբերյալ արձանագրության մեջ նշված Հրավերի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ժամկետներում Հանձնաժողովից պարզաբանումներ պահանջելու իրավունքին, ապա գտնում ենք, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ պարզաբանում պահանջելը մասնակցի իրավունքն է և ոչ թե պարտավորությունը:

Բողոքաբեր ընկերությունը Կենտրոնին ներկայացված բողոքով գնումների բողոքարկման խորհրդից պահանջել է «Տեկոմ Գրուպ» կազմակերպության և «Վ-Լյուքս» ՓԲԸ-ի կոնսորցիումի առաջարկն ընթացակարգի պահանջներին տեխնիկապես համապատասխան ճանաչել և իրավունք տալ կոնսորցիումին գնային աճուրդին մասնակցելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված են բողոքարկման խորհրդի կողմից կայացվող որոշումների տեսակները: Այսինքն, բողոքաբեր ընկերության կողմից բողոքով ներկայացված պահանջը դուրս է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ խորհրդի կողմից որոշում ընդունելու լիազորությունների շրջանակներից:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վ-Լյուքս» ՓԲԸ-ի կողմից 06.09.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Ազգանուշ Ֆրանգյան

Անդամներ՝ Լեռնիկ Խաչատրյան

Վարազդատ Մկրտչյան